

և ապա դեպքով մը կ'անցնի հայերուն, ինչպէս կը պատմէ Օրբելեան¹⁹:

Յովհաննէս եպիսկոպոս կը բռնէ Սուրբանին մանուկը, որ ծանր հիւանդ էր. և Սուրբանը մասնաւոր հրամանադրով մը՝ Հրաշկարեղը կը յանձնէ եպիսկոպոսին, իբրեւ ժառանգութիւն Նորավանքի. սակայն ժամանակ մը վերջ, պարսիկները դարձեալ կը դրաւն և դուրս կը քշեն հայ եպիսկոպոսը. քիչ վերջ խաչենի իշխանները կը կազմակերպուին, և Ախթամար ու Վասակ Օրբելեանները կու գան կը դրաւն բերդը, որ այնուհետեւ իրենց գերդաստանին կեդրոնատեղին և Օրբելեաններու բերդը կ'ըլլայ:

Օրբելեաններու իշխանութիւնը Հրաշկարեղի մէջ

ԺԳ. դարուն է որ մէջտեղ կ'ելլեն Օրբելեանները, և իրենց կեդրոնատեղի կ'ընեն Հրաշկարեղը և երկար ժամանակ կ'իշխեն խաչենի և իր շրջակայ երկիրներուն վրայ: Հրաշկարեղի առաջին տէրը և ժառանգորդը եղած է ԼԻՊԱՐԻՏ, որ դայն ստացած է ԱԹԱՊԷԿ ԻԻԱՆԷՆ, վրաց թագաւորին հրամանով. ասոր կը յաջորդէ ԵԼԻԿՈՒՄ, որուն ժամանակ թաթարները մտան Հայաստան, ԺԳ. դարուն, Ասլան Նոյ զօրավարի առաջնորդութեամբ:

Ելիկում իրեններով կ'ամրանայ Հրաշ-

կարեղի մէջ. Ասլան կու գայ կը պաշարէ և կը նստի. կը շրջի բերդին շուրջը և կը տեսնէ որ անհնարին էր դայն դրաւել. կ'երթայ բերդին դիմաց և մարդ կը դրկէ Ելիկումին ըսելով. «արա՛ ընդ մեզ սէր, և ե՛կ առ մեզ, և բազում բարութիւնս դոցես ի մէջը. ապա թէ ոչ, մինչեւ ե՞րբ նստցիս ի քարիդ յայդ, մեք չենք գնալոյ յայսմ աշխարհէ, այլ Աստուած հայրենեօք դսա ետ մեզ»: Այս խօսքերը լսելով՝ Ելիկում համոզուեցաւ և ելաւ ընծաներով անոր ընդառաջ գնաց: Ասլան իր խօսքը պահելով՝ շատ սիրեց Ելիկումը, և անոր տուաւ ոչ միայն իր բերդը, այլ զինքը իշխան և տէր կարգեց իր շրջակայ հողերուն՝ Վայոց Ձորին և Եղեղեայ: Ասլանի կը յաջորդէ իր եղբայրը Սմբատ, և միւս եղբայրը Տարսայիճ, որ կտակով մը Հրաշկարեղը իր որդւոյն Ստեփանոսի կը թողու²⁰:

Անկէ վերջ մեր պատմիչները չեն խօսիր Հրաշկարեղի մասին: Քաջբերունեաց Ամաղու գիւղին մօտերը բերդի մը աւերակները գտնուած են. և շատեր կը համարին որ Հրաշկարեղի մնացորդներն ըլլան. մանաւանդ որ հոն ծառ մը կայ, որ ճգնաւորի տուն կը կոչեն մօտակայ բնակիչները. այս սուրբին անունէն է որ, հաւանաբար, իր անունը առած է այս բերդը՝ ՀՐԱՇԿԱՐԵՂ²¹:

(Շարունակելի)

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԵՐՈՒ ՅՕՐԻՆՄԱՆ ՏԱՐԵԹԻԻԸ

1956 թուին, Շիրակ ամսագրին մէջ¹ յօդուածով մը ուսումնասիրած էի հայերէն գրերու յօրինման ժամանակի հարցը՝ օգտագործելով սկզբնաղբիւրներ և նոր մենագրութիւններ: Այդ ուսումնասիրութեան մէջ յանգած էի այն եզրակացութեան՝ որ հայերէն տառերու գիւտին ըստ յօդ թուականն է 406: Նոյն տարուան նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներուն այցի դացի Հայաստան: Այնտեղ Պատմական թանգարանի գրի ու գրականութեան բաժնին մէջ տեսայ հայ մշակոյթի կարեւոր թուականներու ցուցատախտակ մը, ուր ըսուած էր հետեւեալը. —

«Հայերէն գրերի յօրինումը 396 թուին, և Հայկական Գրականութեան զարգացումը 4-7րդ դդ.»:

Պատմական թանգարանի սոյն գրուած-ը ինծի մտածել տուաւ թէ հակառակ մեր հմուտ պատմաբաններ ունենալուն՝ տալիս չիոթ կը մնայ հայերէն գրերու յօրինման տարեթիւը: Հայ ժողովուրդի պատմութեան հայրենական պաշտօնական ձեռնարկին մէջ² խնդրոյ առարկայ թուականը նշանակուած է 396, մինչ ուրիշ ուսումնասիրութիւններ դայն կը գնեն շուրջ 404-407 տարիներուն³:

Հայկական տառերու գիւտին որպէս ժամանակ 396 թուականը պաշտպանողները առհասարակ ազդեցութեան ներքեւ են

Նիկողայոս Ադոնցի և Յակոբ Մանանդեանի երկասիրութիւններուն: Ադոնց Մեսրոպ Մաշտոցի կը վերագրէ երկու ճամբորդութիւններ ի Միջագետս.

1. «420 թուականից շատ առաջ» եղած ճանապարհորդութիւն մը՝ ի խնդիր հայերէն տառերու գիւտին⁴:

2. 420-425 թուականներուն⁵, աւելի հաւանաբար 430ին, երկրորդ ճամբորդութիւն մը՝ կրօնական հարցով: Ադոնց կ'ըսէ. «Հաւանական է, որ Մաշտոցի այցը սէ. «Հաւանական է, որ Մաշտոցի այցը ստորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորիւն, կապ ունի հաւատոյ խնդրի հետ և մօտ է 430 թուականներին»⁶:

Ադոնց՝ Մաշտոցի առաջին ուղեւորութիւնը կը հիմնէ բիւզանդական աղբիւրէ մը քաղած տեղեկութիւններուն վրայ: մը քաղած տեղեկութիւններուն վրայ: փոքր պատրիարք իր Գրադարան աշխատութեան մէջ կը յայտնէ թէ Թէոդորոս Մոպսեստացի (350-428) գրած է գիրք մը՝ Ընդդէմ մոզուքեան, ուղղուած «առ Մասսուրիոս, ծագումով Հայաստանից և ինքն քորեպիսկոպոս»⁷: Թէոդորոս իր հակադրադաշտական գրութիւնը հեղինակած է երկրորդին (383-392) շրջանին⁸: Այս պարագայէն մեկնելով՝ Ադոնց կ'ենթադրէ թէ 380ական թուականներուն Մոպսեստացին օգնած է Մասսուրիոս-Մաշտոցի՝ հայերէն գրերու յօրինման մէջ:

(խմբագրութիւն), Ա. հատոր, Երևան, 1949, էջ 11: 2. Լուսկոտկա, Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 182: Ա. Գ. Արաւահամեան, Հայ գրի և գրչութեան պատմութիւն, Երևան, 1959, էջ 51-56:

3. Ադոնց, «Անծանօթ էջեր Մաշտոցի և նրա աշակերտների կեանքից, ըստ օտար աղբիւրների», Հանդէս Ամսօրեայ, 1925, էջ 531-535:

4. Նոյն անդ, էջ 435-437:

5. Նոյն անդ, էջ 535:

6. Նոյն անդ, էջ 195:

7. Նոյն անդ, էջ 441:

1. «Հայերէն գրերու գիւտին ստոյգ տարեթիւը», Շիրակ, Պէյրութ, 1956, թիւ 3, էջ 26-30, և թիւ 4, էջ 136-141:

2. Հայ ժողովրդի պատմութիւն (խմբագրութիւն), Երևան, Ա. հատոր, Ա. հրատարակութիւն՝ 1951, էջ 127, երկրորդ տպագրութիւն, 1956, էջ 150: Մաշտոցի կեանքն ու գործունէութիւնը պատմող նոր զրբոյկի մը մէջ ևս հայերէն գրերու յօրինման տարին գրուած է 396. տես Ս. Տ. Մելիք-Բախչեանի և Թ. Խ. Յակոբեանի, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1959, էջ 40:

3. Օրինակ՝ Հայ գրականութեան պատմութիւն

5. — ԲԱԶՄԱՎԷՊ

19. Անդ, էջ 349-350:

20. Սխալման, էջ 180:

21. Օրպելեան, անդ, էջ 360:



Ապա ան կ'եղրակացնէ. «Մրանով ընդգրծ-
ւում է գրերի գիւտի համար որոշ եւ դրա-
կան տարեթիւ, 383-392 տարեթիւնը տա-
նամեայ միջոցը»⁹:

Ազոնցի այս վարկածը չի յարմարիր
Մաշտոցի կեանքի պարագաներուն: Ահա
թէ ինչու:

1. Կորիւն կը պատմէ թէ Մաշտոց կրօ-
նաւորութեան մտաւ Պարսից Վառամ կամ
Վահրամ Դ. Կրման արքայի չորրորդ տա-
րին. — «Եւ արդ առնու համար ամաց
սրբոց հաւատոց ի չորրորդում ամէն Կըր-
մանայ արքայի...»¹⁰: Վառամ թագաւոր
գահ բարձրացած է 388-389 թուականին¹¹.
ուստի անոր չորրորդ տարին է՝ 391-392:
Այս, որպէս Մեսրոպի կրօնաւորութեան
նուիրման տարեթիւը՝ ստույգ կ'ընդուն-
ուի գիտնականներէն¹²: Արդ, եթէ տիւ-
ղոսներու վրայ հիմնուելով տեսութիւն-
ներ պիտի մշակենք, չէ կարելի որ Մաշ-
տոց կամ Մաստուրիոս իրր բոքեպիսկո-
պոս եւ Թէոդորոս իրր երէց իրարու հետ
թղթակցած եւ կամ տեսակցած ըլլան
392ին, քանի որ ճիշտ այդ ժամանակ Մաշ-
տոց կը մտնէր շրջուն քարոզչի ասպա-
րէզը, իսկ Թէոդորոս ալ եպիսկոպոս կը
ձեռնադրուէր:

2. Համաձայն Փոտի, Թէոդորոս իր հա-
կաճառութիւնը, Ընդդէմ մոգութեան,
ուղղած է Մաստուրիոս անուն, ծագումով
Հայաստանցի բոքեպիսկոպոսի մը: Ազոնց
«Մաստուրիոս»ը կը նոյնացնէ Մեսրոպ
Մաշտոցի հետ. բայց ուշադրութեան ար-
ժանի է որ նա կը կոչուի ո'չ թէ հայ կամ
հայաստանցի՝ այլ «ծագումով Հայաս-
տանէն»: Սոյն պարագան մեզի ենթադրել
կու տայ որ խնդրոյ առարկայ անձը

9. Նոյն անդ, էջ 531:

10. Վարք Մաշտոցի, հրատարակութիւն Մ. Արե-
ղեանի, Երեւան, 1941, էջ 100:

11. A. Christensen, *L'Iran sous les Sassanides* (Բ.
հրատարակութիւն) 1944, էջ 253. R. Grousset,
Histoire de l'Arménie, 1947, էջ 170:

12. Ա. Մ. Գարաբաղեան, Քննական պատմութիւն
Հայոց, Թիֆլիս, 1895, Գ. մաս, էջ 23: Յ.
Մարկուարտ, Պատմութիւն հայերէն նշանա-
գրերու եւ վարդապետ Մաշտոցի, Վիեն-
նա, 1913, էջ 58: Հ. Ն. Ակիսեան, Հանդէս

Հայաստան չէր ապրեր, այլ Հայաստանէն
մեկնած էր կամ ծագած: Այսպիսի մէկը
կրնար գոյութիւն ունենալ՝ օրինակ Փոքր
Հայքի եւ կամ Կիլիկիոյ մէջ, ուր կ'ա-
պրէր Թէոդորոս¹³: Եթէ մինչեւ իսկ ըն-
դունինք Մաստուրիոս-Մաշտոցի նոյնու-
թիւնը, նշանակալից է «քորեպիսկոպոս»
տիւղոսը: Քորեպիսկոպոս (Χωρεπισκο-
πος) կը մատնանշէ այն եպիսկոպոսը՝ որ
կը կառավարէր գիւղական շրջանի մը ե-
կեղեցիները, ենթակայ մնալով թեմի ե-
պիսկոպոսին՝ կրնար միայն խոնարհ աս-
տիճանի ձեռնադրութիւնները կատարել¹⁴:
Մեսրոպ մինչեւ Սահակ հայրապետի յա-
ջորդելը՝ առաջնորդական վարչական
պաշտօն չունեցաւ, այլ շրջուն քարոզչու-
թիւն, ուսուցչութիւն եւ Ս. Գրքի թարգ-
մանութիւն կը կատարէր: Սոյն կէտը մե-
զի իրաւունք կու տայ պնդելու որ Մե-
սրոպ 392ին, երբ նոր կ'ընդգրկէր կրօնա-
ւորութիւնը, չէր կարելի որ կոչուէր
«քորեպիսկոպոս»:

3. Կորիւնի վկայութեամբ, Մաշտոց
գինուորական ծառայութիւնը լքելէն ետք
եւ հայերէն գրերը գտնելէն առաջ, երկար
ժամանակ նուիրուեցաւ ձգնաւորական
կեանքի, եւ ապա Գողթան ու «Մարաց
կողմանց» քարոզչութեան¹⁵: Պահ մը սա-
կայն երեւակայելով որ ան Հայոց արքու-
նիքէն հեռանալէն յետոյ չուտով «քորե-
պիսկոպոս» եղաւ եւ անմիջապէս գրերու
գիւտին համար վազեց Միջագետք, դար-
ձեալ չէր կրնար Թէոդորոսի հանդիպել,
քանի վերջինս 386 թուականէն սկսեալ կը
գտնուէր Տարսոն (Կիլիկիա): E. Amann,
որ Թ. Մոպսուեստացիի մասին գրած է

Ամսօրեայ, 1935, էջ 507-508: Արրահամեան,
անդ, էջ 56:

13. Հետաքրքրական է որ 1924-1925 թուին, L.
Mariès իր *De Deo d'Eznik de Kolb աշխա-
տութեան մէջ*, էջ 88, յիշած է Թէոդորոսի
Ընդդէմ մոգութեան հակաճառութիւնը՝ ա-
ռանց նոյնացնելու Մաստուրիոսը Մաշտոցի
հետ:

14. F. L. Cross, *The Oxford dictionary of the
Christian Church*, 2-րդ տպւոյ, յօդուած՝
«Ckorepiscopus», էջ 273:

15. Վարք Մաշտոցի, էջ 36, 38, եւ 40:

հմտալից ուսումնասիրութիւն մը, կ'ըսէ.

«Diodore, son ancien maître, l'attirait
auprès de lui; c'est à Tarse qu'on le
[Théodore de Mopsueste] trouve entre
386 et 392; c'est là qu'on vient le cher-
cher pour en faire l'évêque de Mop-
sueste, pas très loin de Tarse, dans la
Cilicie seconde»¹⁶.

Յիշեալ պատճառներով, բացայայտ կը
դառնայ որ «383-392 տարեթիւնի տաճա-
մեայ միջոցը» (Ազոնց) չէ կարող հայե-
րէն գրերու յօդինման «որոշ եւ դրական
տարեթիւ» լինել, քանի այդ շրջանին
Մաշտոց տակաւին արքունի քարտուղար-
Մարական էր, իսկ Թէոդորոս ալ կը գլու-
նուէր Տարսոն, ուր եւ իր երեցութեան
մեծագոյն մասը (386-392) կ'անցընէր¹⁷:
Որպէս լրացում, ըսեմ որ Կորիւնի վկա-
յութեամբ¹⁸, Մաշտոց Միջագետքի մէջ
հանդիպած է Ամիդի Ակակիոս եւ Եղեսիոյ
«Բարիլաս» կամ Պակիլիաս¹⁹ եպիսկոպոս-
ներուն:

Գալով Մանանդեանի, ան եւս Հայոց
Կրօն գիւտի ժամանակը կը նկատէ 392-
393 տարեթիւ²⁰: Անոր տեսութեան հիմքը կը
կազմեն, Ն. Ազոնցի վարկածէն զատ, Կո-
րիւնի պատմութեան այն վկայութիւննե-
րը՝ որոնք կը յայտնեն թէ հայերէն գրե-
րը յօդինուեցան Վառամապոսի թագաւո-
րութեան 5-6րդ տարեթիւ²¹: Վառամապոսի
զահակալութեան սկիզբը ընդունելով 387-
388ին, նոյնի 5-6րդ տարեթիւ՝ 392-393 թը-

16. E. Amann, «Théodore de Mopsueste», *Diction-
naire de Théologie Catholique*, Փարիզ, Ժե.
հատոր, Ա. մաս, 1946, էջ 236:

17. Ն. Ազոնց Հետադային հրաժարած կ'երեւի իր
տեսութեան՝ թէ հայերէն գրերը յօդինուած
ծանօթ էջեր Մաշտոցի եւ նրա աշակերտների
կեանքից՝ ուսումնասիրութեան (1925 թ.)
12 տարեթիւն ետք, Աստուածաշունչի հայերէն
թարգմանութեան 1500ամեակին առիթով դը-
րած յօդուածին մէջ կ'ըսէ. «Մաշտոցի հե-
տագոտութիւնները՝ հայ այրուքներն ստեղծե-
լու համար, 392ին սկսուած, աւարտեցան
405ին. այս թուականին, ոչ միայն տառերը
պատրաստ էին, այլեւ սուրբ Գրքերը, գէթ
մասամբ, թարգմանուած էր արդէն» («Հա-
յացած Աստուածաշունչը եւ անոր պատմա-

ւականը՝ կը համարի հայկական գրերու
ստեղծման ժամանակը: Միւս կողմէ, Կո-
րիւնի ժամանակագրական վերջաբանին
մէջ գրերու գիւտին տարեթիւը, երկու
յստակ տուեալներով դրուած է 406ին:
Մանանդեան հարթելու համար Կորիւնի
գրքին ներքին վկայութեան եւ վերջաբա-
նի փաստերուն «հակասութիւնը»²², կը
խորհի թէ վերջաբանը «պարզապէս ընդ-
միջարկութիւն է ուշ ժամանակաշրջա-
նի»²³: Ան իր ենթադրութիւնը կը բացա-
նէ այսպէս. — «Առանձնապէս հետա-
քրքիր է նաեւ այն, որ հնագոյն ժամա-
նակների հայ մատենագիրներից եւ ոչ մէ-
կը, ո'չ Ստեփանոս Տարսնեցին, ո'չ Սա-
մուէլ Անեցին եւ ո'չ էլ Վարդան վարդա-
պետը, ըստ երեւոյթին, ծանօթ չեն եղել
Կորիւնի վերջաբանին եւ գիտեն միայն
Կորիւնի վկայութիւնները: Ըստ
նրա բուն բնագրի վկայութիւնները: Ըստ
այսմ՝ աչքի առաջ ունենալով վերոյիշեալ
նկատուածները, ինձ թուում է, կարելի
է հետեւութիւն անել, որ Կորիւնի աշխա-
տութեան վերջում գտնուող ժամանակա-
գրական վերջաբանն ընդմիջարկութիւն
է եւ չէ կարող վերագրուել իրեն՝ Կորիւ-
նին»²⁴:

Մանանդեան Կորիւնի գրքին վերջաբա-
նը «ընդմիջարկութիւն» կը համարէ եր-
կու պատճառներով. —

1. Որովհետեւ Կորիւնի գրքին ներքին
վկայութիւնը կը հակասէ վերջաբանի
ժամանակագրութեան:

կան տարրութիւնը», Ամսիս, Փարիզ,
1937, թիւ 3, էջ 16):

18. Վարք Մաշտոցի, էջ 46, 48, եւ 50:

19. Կորիւնի «Բարիլաս»ին Պակիլիաս լինելուն
մասին տես Յ. Մարկուարտ, անդ: Հ. Յ.
Թորոսեան, Բագմավէպ, 1932, էջ 259-261:
Ակիսեան, անդ, էջ 513-514: Մ. Վրդ. Գ.
Գրիգորեան (Եւսեբիոսեան), Շիրակ, անդ,
էջ 137-139:

20. Քննական տեսութիւն հայ մոգովորի պատ-
մութեան, Բ. հատոր, Ա. մաս, Երեւան,
1937, դիւ. ԺԳ:

21. Վարք Մաշտոցի, էջ 44 եւ 50:

22. Մանանդեան, անդ, էջ 261:

23. Նոյն անդ, էջ 245:

24. Նոյն անդ, էջ 266:

Կորիւնի պատմութեան բուն բնագրին եւ վերջապահին միջեւ հակասութիւնն դուրսէն չուրի: «Հակասութիւնը» ստեղծած է ինք՝ Մանանդեան: Արդարեւ Վառլապուհ Հայոց գահուն վրայ վրայ բարձրացած է 400-401ին, ըստ Սեբեոսի Արքայացանկի վկայութեան²⁵, եւ անոր 5-6րդ տարին՝ 405-406 թուին տեղի է ունեցեր գրեթէ զիւտը²⁶:

2. Հետագայ ժամանակներու պատմիչները օգտագործած են Կորիւնի ո՛չ թէ վերջապահին՝ այլ բնագրին վկայութիւնը: Եւ քանի որ բնագիրը գործածեր են, ուրեմն վերջապահը դուրսէն չէ ունեցած երկար ատեն:

Բացատրելի կէտ մը, յիշուի: Հայերէն տառերու յօրինումը Մեսրոպի ձեռքով եղաւ Հայոց Վառլապուհ թագաւորի օրով, անոր 5-6րդ տարին: Արդ հայ մատենագիրները բնականաբար առաջին առթիւ պիտի յիշէին այս կէտը, որ Կորիւնի աշխատութեան բնագրին մէջ գրուած է: Վերջապահի վկայութիւնները կապ ունին Պարսից Յազկերտ Ա. արքային եւ Մաշտոցի վախճանման. հետեւաբար յիշատակութեան յարմարութիւն կամ զիւրութիւն չեն ընծայեր:

Կորիւնի վարք Մաշտոցի գրքին հնագոյն ձեռագիրը (թիւ 2639 ձեռագիր Երեւանի Պետական Մատենադարանի) կու գայ Ժէ. դարէն (1672 թ.): Այդ ձեռագրին մէջ, զոր Հայաստան այցելութեանս անձամբ տեսայ, վերջապահը կայ ամբողջապէս:

Պահ մը սակայն ենթադրենք որ Կորիւնի

25. Ալիքեան, անդ, էջ 465-466: Տես նաեւ Ս. Պալատեան, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1890, էջ 172: Գ. Տէր-Մկրտիչեան, «Հայկական գրութեան 1500ամեակի առթիւ», Արարատ, 1912, էջ 512-513:

26. Արժան է գիտնալ այստեղ որ Մ. վրդ. Չամչեան (Պատմութիւն Հայոց, Ա. հատոր, Վենետիկ, 1784, էջ 762-765) եւս հայերէն գրեթէ զիւտը կը նշանակէ 406-407ին. բայց սոյն թուականը կը համարի Վառլապուհի թագաւորութեան ո՛չ թէ 6րդ, այլ 16րդ տարին եւ Կորիւնի (նոյն անդ, էջ 50) 2. թիւը կը սրբադրէ իր Ժ-2: Ասիկա սրամիտ եւ յա-

վերջապահը ընդմիջարկութիւն է: Այս առիթով կարելի է հարցնել. — Եթէ վերջապահը յետսամուտ է, զայն ընդմիջարկող ուրիշ քաղեց իր վկայութիւնները. բնականաբար հին աղբիւրներէ: Ո՞ւր են այդ աղբիւրները, որոնց մենք չենք հանդիպիր: Յետոյ, ի՞նչ նպատակ ունեցած է ընդմիջարկողը, պատմութիւնը աւելի փաստաւորե՞լ՝ թէ խեղաթիւրել: Եթէ հետագայ ժամանակներու խմբագրին մը տաժումը եղած է պատմութիւնը աւելի հիմնաւորել, ուրեմն ներքին վկայութիւնները ճիշտացուցած է պարզապէս. ապա թէ ո՛չ՝ պէտք է եղբակացնել որ հայ մը յղացած է Հայոց գրեթէ զիւտին տարեթիւը խանգարելու վատ դադարիտը:

«Մաշտոցի վարք»ին վերջապահին Կորիւնի գրչէն ըլլալուն մասին հարկաւոր չէ աւելի խօսիլ, քանի Մանանդեան հետագային հրաժարած է իր ենթադրութեանէն: Ան իր Քննական տեսութիւնի հայ ժողովրդի պատմութեան աշխատութեան Բ. հատորի Ա. մասը գրած է 1951ին: Տարի մը ետք փոխած է իր տեսակէտը եւ յայտարարած՝ որ Կորիւնի վերջապահը թէպէտ սկիզբէն դուրսէն է ունեցեր, բայց հետագային նոր խմբագրութեան մը ենթարկուած է ու խաթարուած²⁷: Մանանդեան կ'ըսէ. —

1. Յովհաննէս կաթողիկոս, որ իր տեղեկութիւնները Մեսրոպի մասին՝ քաղած է Մովսէս Խորենացիէն, գրեթէ զիւտին ժամանակի որոշման պարագային չեղած է անկէ:

27. Նոյ սրբագրութիւն մը պիտի ըլլար՝ եթէ Ստեփանոս Առողիկ (Պատմութիւն տիեզերական, հրտ. Ս. Մալխասեանի, Պետերսբուրգ, 1885, էջ 74) եւ Վարդան Արեւելցի (Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 49) հաստատուն Կորիւնի վկայութիւնը՝ թէ հայերէն գրեթէ յօրինուեցան Վառլապուհի վեցերորդ տարին:

27. «Հայ գրերի գիտի տարեթուի հարցի շուրջ», Տեղեկագիր Հայաստանի գիտութիւնների Ակադեմիայի, Երեւան, 1952, թիւ 7, էջ 41-57:

2. Յովհաննէս պատմաբան Մ. Խորենացիէն չեղելով՝ հետեւած է Կորիւնի ժամանակագրական վերջապահին:

3. Բայց որովհետեւ Կորիւնի վերջապահին մէջ եւս գրեթէ զիւտը նշանակուած է Յազկերտ Ա. արքայի ժամանակ, ուրեմն Կորիւնի «նախնական» վերջապահը հետագային նոր խմբագրութեամբ մը փոփոխուած է:

4. Կորիւնի «նախնական» վերջապահին մէջ հայերէն գրեթէ զիւտը պէտք է որ նշանակուած ըլլայ Վառլապուհի (388-

399) արքայի շրջանին, եւ ո՛չ Յազկերտ առաջինի:

Իրականութեան մէջ Յովհան պատմաբան իր տեղեկութիւնները քաղած է ո՛չ թէ Կորիւնի «նախնական» վերջապահին, այլ Մովսէս Խորենացիի պատմագրէն, ուր հայերէն գրեթէ զիւտին ժամանակակից յիշուած է Պարսից Յազկերտ Ա. արքան (399-421): Ստորեւ կը ներկայացնենք Մ. Խորենացիի եւ Յովհան պատմաբանի խնդրոյ առարկայ հատուածներու բաղդատականը. —

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՄԱԲԱՆ

Իսկ իբրեւ եկն սուրբն Սահակ եւ պարգեւեալսն յԱրտաշէր հաստատեաց... մեռանի ապա Արտաշէր արքայ Պարսից, եւ փոխանակ նորա քաղաքի վառ, որ եւ Կրման կոչեցաւ, նորա քաղաքից վառ, որ եւ Կրման կոչեցաւ, ամս տասն: Եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց եւ ընդ թագաւորին մերում Վառլապուհոյ եւ ընդ մեծին Սահակայ: Եւ էր խաղաղութիւն ի մէջ Վառլապուհ եւ Արտաշէր: Վառլապուհ ունէր զաշխարհս մեր, եւ ծառայէր Երկրորդ թագաւորացն, տալով հարկս, զմասինն Կարսից Վառլապուհ եւ զմասինն Յունաց՝ Արտաշէրայ:

Գլ. ԾԱ. — Բայց յորժամ եկն մեծն Սահակ եւ զամենայն պարգեւեալսն յԱրտաշէր հաստատեաց՝ մեռաւ արքայն Պարսից Արտաշէր, եւ փոխանակ նորա քաղաքից վառ, որ եւ Կրման կոչեցաւ, ամս տասն: Եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս Հայոց եւ ընդ թագաւորին մերում Վառլապուհոյ եւ ընդ մեծին Սահակայ: Եւ էր խաղաղութիւն ի մէջ Վառլապուհ եւ Արտաշէր: Վառլապուհ ունէր զաշխարհս մեր, եւ ծառայէր Երկրորդ թագաւորացն, տալով հարկս, զմասինն Կարսից Վառլապուհ եւ զմասինն Յունաց՝ Արտաշէրայ:

Գլ. ԾԴ. — Վառլապուհ Արտաշէրայ՝ փոխանակ նորա թագաւորէ նորին որդի, որ կոչեցան Թէոֆոս Փոքր. եւ զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ մերում աշխարհիս եւ ընդ արքային մերում Վառլապուհոյ: Բայց զմասն իւր ոչ հաւատաց նմա, այլ շապհոյ. բայց զմասն իւր ոչ հաւատաց նմա, այլ խեղեան կալաւ զործակալօք եւ խաղաղութիւն տալով Յազկերտի արքային Պարսից: Ընդ այն բար ընդ Յազկերտի արքային Պարսից: Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, եւ բերեալ զնշանադիր մերոյ լեզուիս²⁸:

Սոյն բաղդատութիւնը ցոյց կու տայ թէ Յովհաննէս Դրասխանակերտցի՝ հայերէն գրեթէ յօրինման վերաբերող իր ծանօթութիւնները առած է Մ. Խորենացիի պատմագրէն, երկու գլուխներու (Գիրք Երկրորդ, Գլուխք ԾԱ. եւ ԾԴ.) տարբեր յիշողութիւնները իրարու կարկտելով, եւ անպատմաբար գործած է սխալ մը՝ հայերէն գրեթէ յօրինուած զնեղումը Պարսից յերէն գրեթէ ստեղծումը զնեղումը:

Տարեւր Համալսարան
Անգլիա, 1961

28. Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 324 եւ 328:

Վառլապուհ արքայի շրջանին, փոխանակ Յազկերտի, ինչ որ կը պատմէ Մ. Խորենացի:

Այսպէս, Կորիւնի Մաշտոցի վարքի վերջապահին մասին Մանանդեանի երկրորդ կարծիքն ալ կը հերքուի եւ կը հաստատուի թէ հայկական գրերը յօրինուած են Վառլապուհի 6րդ տարին՝ այն է 406 թուականին:

ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

29. Յ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 54: